

պիսի զօրապետի մը ըրէ , որ քեզի նմանին . մի խաբուիր , Հռոմայեցւոց մէջ հայրենեաց թշնամի մը չես կրնար գըտնել : Ծանամի ենք Փալսկեանց՝ հետ , ու պիտի ջանանք որ անոնց արիւնը վազ ցընել տանք . բայց պատերազմի ժամանակէն դուրս անդթութիւն չենք ըներ : Խնչպէս խաղաղութիւնը , այսպէս պատերազմն ալ իրեն օրէնքները ունի . և մենք առանց արդարութեան պատերազմելու չենք եկած : Պիտնաս որ մենք այս խեղչ ու արդար տղոց դէմ՝ կուռելու համար ձեռուընիս զէնք չենք առած , հապա այն զինուորեալ արանց դէմ , որոնք առանց մեզմէ վնաս մը կրելու , առանց մեզմէ գրգռուելու՝ Այս քաղաքին դիմաց մեզի դէմ պատերազմի վազեցին : Ի՞սոյց քու յանցանքդ անոնցմէ շատ աւելի մեծ է , անօրէնութեան մէջ քու քաղաքակիցներուդ վըրայ յաղթանակեցիր : Խակայն ես ալ քեզի պիտի յաղթանակեմիմհռոմէական առաքինութիւններովս , որ են խոհեմութիւն , գործունէութիւն ու արիւթիւն , և քիչ ատենէն Փալերիոյ պարիսպները հիմնայատակ պիտի կործանին . . : Այս ըսաւ , ու հրամայեց իր զինուորներուն որ տղոց ձեռքը խարազաններ ու գաւազաններ տան , որպէս զի ծեծելով ինչուան քաղաքը տանին իրենց վարժապետը : Հպատակեցան տղաքը ուրախութեամբ Լամիլլոսի հրամանին , վարժապետին չարութիւնն իմանալով , ու արդարութեան ձեռքով չարութեան չար փոխարէնը հատուցին անոր : Ի՞աղաքացիք այս բանս որ տեսան ու իմացան եղածը , Հռոմայեցւոց առաքինութեան վրայ ափշեցան մնացին . և մէկէն ՚ի մէկ դեսպաններ խաւըցին Լամիլլոսի բանակը , որոնք Փալսկեանց բերնէն ասանի խօսեցան . . Ավ մեծախորհուրդ Հռոմայեցիք , ձեր զինուորներն ու ձեր զօրապետը առանց զինուց յաղթեցին մեզի . և ահաւասիկ եկեր ենք մենք ձեր յաղթանակը

1 Փալերիոյ բնակիչքը Փալսկեանէն կ'անուանէին միշտ , որովհետեւ այս քաղաքը Փալսկեանէն ալ կ'ըսուեր :

ծանուցանելու ձեզի . իմացանք Լամիլլոսի զիւցազնական գործովը՝ որ աւելի երջանիկ կրնանք ապրիլ մենք Հռոմայեցւոց իշխանութեան տակ , քան թէ մեր օրինօքը կառավարուելով : Այս պատերազմիս կատարածը գեղեցիկ օրինակ մը կու տայ բոլոր մարդկային ազգին . դուք անմահացաք յաղթութենէն վեր սեպելով զհաւատարմութիւնը . մենք քաջացանք այսպիսի վեհանձնյաղթականներու անձնատուր ըլլալով : Ի՞սա ուրեմն մենք ձեր ձեռքն ենք . քաղաքին գոները բաց են , գրաւները պատրաստ են . մտէք ներս ու ամէն բանի տիրեցէք : Հիմակուընէ հաւատարիմհպատակութիւն կը խոստանանք ձեզի ու անմոռաց երախտագիտութիւն . . .

## ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՄԱՐԴՈՒԹԻՒՆ

Հուակառը նոր ակնատ 4 մը մարդուս փորուն մէջ գտնուած բոտուներու 5 համար :

Ո՛տերս երևելի բժիշկ մը մէկ նոր ակնատ մը հնարեր է՝ զիւրաւ որսալու համար մարդուս փորուն մէջ գոյացած ժապաւինաձև երկայն բարակ բոտուները : Այս ակնատը շինուած է ուկիէ կամ արծըթէ թիթեղէ մը , որուն մէջ յարմարցուցած է բոլորաձև զսպանակ մը . ասոր վրայ ալ կոնցուցած է պատառաքաղի ձեռով գործիք մը ամենասուր ծայրերով : Ակներու սովորական ակնատներու պէս կը լարուի այս ակնատն ալ , ու մէջը դէպ ՚ի խորունկը պանիրի կտոր մը կը դրուի :

Ավ որ այս բոտուսներէն ունի փորուն մէջ պէտք է որ երկու իրեք օր բոլորովին ծոմ անցընէ , միայն թէ որ շատ ծարուի՝ կրնայ քիչ մը ջուր խմել : Այսն կով փորուն մէջի բոտուը ամսօթութենէ ստիպուած ու ներսը ուտելու բան

չգտնելով՝ կը վազէ դէալ 'ի ստամբսը .  
ռայց զանիկաց ալ բոլորովին դատարկ  
գտնելով՝ մինչև կոկորդը վեր կ'ելէ , և  
պանիրին հօտէն խաթուած՝ կ'երկնցը .  
նէ գլուխը լարուած որոգայթին մէջ,  
որ առաջուց դրուած պիտի ըլլայ բեր-  
նին մէջ : Պանիրը քաշելու ատեն տուած  
ցնցմունքէն՝ զսպանակը կը ցատքէ , և  
մէջի սուր ծայրերը վզին մէջ խոթուե-  
լով՝ կը բռնուի կը մնայ : Ո՛եկէն մարդը  
պէտք է սկսի դուրս քաշել բռնուած  
կենդանին բարակ մետաքսէ ժապաւի-  
նով մը , որ առաջուց հազորդուած պի-  
տի ըլլայ գործիքին : — Եղն այս բժիշ-  
կը սոյն կերպով մէկու մը փորէն 50 ոտք  
երկայնութեամբ բռտոտ մը բռներ հա-  
ներ է :

ՕԴԵՐԵՒՈՒԹՍԲԱՆՈՒԹԻՒՆ

Երկու հրաշալի նոր օդերևոյքներ :

Կ'նգղիոյ ԾԱՀՅՈՎՈՒ Քաղաքին մօտ՝  
այս տարի յունուարի 7<sup>եւ</sup> իրիկուան դէմ  
ժամը 4½ անցած , օդը հանդարտ և  
երկինքը թեթև ամպերով ծածկուած  
միջոց մը՝ յանկարծ լսու մըն է կը փայ-  
լատակէ օդուն մէջ , և հարաւային ա-  
ռեմտեան կողմանէ՝ հորիզոնէն գրեթէ  
45° բարձրութեամբ լուսաւոր օդե-  
րեսոյթ մը կը սահի , և ասուպի մը պէս  
դէպ 'ի երկիր թռչելով՝ կը մարի դեռ  
գետին չհասած : Լոյս օդերեսոյթը չորս  
կողմէն փայլուն կայծեր ցատքեցուցեր  
է իյնարու ատեն հորիզոնական զրքով ,  
և իր ձեւացուցած պայծառ ու ձերմա-  
կագոյն գիծը քառորդէ մը աւելի դիմա-  
ցեր է օդուն մէջ . նախ կամաց կամաց  
տարածուեր է , ետքը քիչ մը պայծա-  
ռանալով՝ վերջապէս բոլորովին անե-  
րեւութացեր է : Լոյւլ աղաղակ մըն ալ  
լսուեր է օդուն մէջ՝ թնդանօթի մը  
հեռուէն լսուած խուլ և ահաւոր ձայ-  
նին նման : Լոյս երեսոյթը ուրիշ շատ  
մօտ տեղերէ ալ տեսնուեր է , և մաս-

նաւորապէս Պայեկի և Կ'նգղիոյ ծովե-  
զերեայ տեղերէն : Ը ատերը կը հաս-  
տատէն որ մէկ նոր շանթաքար մըն ալ  
այս երեւութով ինկեր է նոյն տեղերը .  
բայց գժբախտաբար ծովուն վրայ ին-  
կած ըլլալով՝ որոշ տեղեկութիւն մը  
չեն կրցած ունենալ :

Լոյսպիսի ուրիշ օդերեսոյթ մըն ալ  
ամայս Յեն , իրիկուան ժամը 8 տասուեր  
կու վայրկեան անցած , Պաղղիոյ Եա-  
միւր քաղաքին վրայ երեցեր է , ուր տե-  
ղի լրագիր մը այսպէս կը նկարագրէ :  
Եղն օրն օդը ամենապարզ էր . և այս  
հրեղէն գունար երբ իր կենդանի լու-  
սովը տեսանելի եղաւ , Հայկ համա-  
ստեղութեան վաղակաւորին տակը կը  
գտուէր : Ո՛եծութիւնը լրացեալ լումնի  
մեծութենէն քիչ մը պատիկ էր . գոյնը  
կապոյտ , և հետքը՝ որ նոյն գոյնն ունէր ,  
զրեթէ 20° երկայնութեամբ միջոց մը  
բռներ էր : Իրեն շարժման ուղղու-  
թիւնն էր հարաւային արևելքէն դէպ  
'ի հիւսիսային արևելք , գագաթնա-  
գծէն զրեթէ 45° հակմամբ :

Լոյս օդերեսոյթը ճամելու ատեն  
կրակի պէս կարմիրեցաւ , և իր պոչը փո-  
խանակ նուազելու՝ կարծ հովահարի մը  
ձեռով լայնցաւ , վրան բազմութեամբ  
պատի աստղերով զարդարուած : Ո Եր-  
ջէն չորս կամ հինգ աւելի մեծ կտորներ  
բաժնուեցաւ . չորս կամ հինգ աղաղակ  
ալ լսուեցաւ՝ հրացանի մը աղաղակին  
նման : Լոյս կտորուանքները կարմիր  
պոչէն կամբուն խսկ՝ օդերեսութէն բաժ-  
նուելով , նկատմամբ գլխաւոր շարժմա-  
նը խոտոր ուղղութիւններ կ'առնէին և  
այնպէս կ'երեւային թէ գագաթնագծին  
կը մօտենան : Լոյտ երեսոյթը երեք  
մանրերկրորդէն աւելի չտեսեց :